

տոււաց, երբ ներկայացընէ ասոնց ժոյժտայից գրեթէ շարունակ ծանր ծանր կաշառքով առ այլազգիո՞ գիրար տապալելը, իրենց պոյրաց (աւագաց) հետ խտտութեամբ վարուիլը և անգուծ ջարդերը, մեզի դառնալ նայիլ կու տայ մեր ազգային պատմութեան անցից՝ յորում՝ գիտեմք մեր նախնեաց յանցանքները, սակայն՝ բաղդատելով ասոնց ըրածին՝ անհամեմատ կիրթ, բարեբարոյ և հաւատարիմ գտնեմք զՀայն, մեր կարելի անաշառութեամբ իսկ ապա, երբ տեսնեմք մեր աշօք, թէ ինչպէս զէպք և Վանք և պէսպէս տնտեսութիւնք՝ այդպիսի երկու ժողովուրդքը (վրահ և մոլտաւ) միացուցին մէկ Ռուս մեն անուամբ և ինքնավար տէրութեամբ, և ո՞ր մնաց կամ մնայ՝ անոնց գրեթէ զուգանուն Արմէնն; տեսակ մի ափշութիւն պատէ զմեզ այսօր, մինչ այլեայլ տեսակք ափշութեանց պատեն Եւրոպի կամ պակաս թանձրութեամբ, գրեթէ բոլոր բանիմաց կամ անիմաց աշխարհս, գորեւելք և արեւմուտք, զիշխանս և զիշխեցեալս) զտգէտս և զխորագէտս ու և մինչև ցե՛րբ . . . :

Ժամանակագրութեանց մէջ մեծ մասամբ օտարաց (Վեհաց և այլոց) և մեզի անծանօթաց և ոչ կարեւորաց յիշատակք են, վասն որոյ աւելորդ համարուեցաւ անոնց ամենուն անուանքն այլ ցանկել, այլ ոմանց. իսկ լեզուի կամ բառից օտարութիւնն այլ (թէ լեհի թէ թաթարի), կամ լաւ եւս՝ հաւաքողիս անհմտութիւնն՝ այլ լեզուաց; անշուշտ տեղ տեղ սխալ ընթերցմունք պատճառած է, բաց ի տպագրութեան սովորական սխալներէ, յորոց մէկ քանին նշանակուած են յաջորդ երեսին վրայ:

Ըստ նիւթոյ բանից կամ պատմութեանն՝ այս հրատարակեալ գործս է յատկապէս Տարեգիրք Հայոց լեհաստանի և Ռուսմեկոյ. բայց թէ անուան համառօտութեան համար և թէ բուն տարեգրութեան հեղինակացն կամանիցացի ըլլալուն համար, (որով և այն քաղքին վրայօք մասնաւոր տեղեկութիւնք գրուած են), միանգամայն կոչեցինք զգիրքս՝ ԿԱՄՆԻՏԵ:

30 յուլիս 1896

Հ. Ղ. Մ. Ա.

Ա. Դ. Ա. Պ

Պ Ա Ր Կ Ե Շ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Կ Ա Մ Բ Ա Ր Ե Վ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

**ԱՐԱՐԱՅԻ** բառոյ Աղաբ կամ Էտէպ՝ նրանակէ ինչ որ սովորաբար ֆաղաքաւարտութիւն կ'ըսենք. բայց այս մեր բառս ուրիշ քաղաքական նշանակութիւն ունի, և աւելի շատ բացատրութիւնք կան մեր լեզուաւ այդ իմաստին (որ է ըստ ֆռ. (politesse իտ. Creanza). ինչպէս, Բարեկենսութիւն, բարեխրատութիւն, Բարեկիրոսութիւն. շատ է և Պար-

կեշտութիւնն, որ գործածուած է այս գրութիւն մէջ, բայց և սա ուրիշ իմաստներ ունի. յաւագոյն բռնի մեզ՝ Բարեկարոսութիւն ըսել. որ թէ՛ շարժմանց թէ՛ վարմանց թէ՛ խօսելոս յարմարի. — Գայով գրութեան՝ արարացի վերաբերիւն, որպէս և վերաբան Դ հատուածին և այլեայլ գրութեանց յայտ աւանն թէ յարարերինէ բարգմանուած է ի հայ, և վայել-

լայկա, նա և մեր դիրքորեանց զեա ծաղկած  
ատեն. վասն զի և Զեազդիոն՝ յորևէ կ'ընդ-  
օրինակներ՝ ԺԴ դարու կիսում գրուած է: Հա-  
սանօրեն հեղինակ բանիցն՝ դեա առելի խրատներ  
այլ գրած է, բայց վերջի հաստատման (Ե) ու-  
րիշ հեղինակէ անուշաձ կ'երեւի: — Իբրեւ  
ձայակ մի բ՛ տրեւելեան զաղապարաց և բի  
հայկական գրականութեան ընդարձակութեան  
և զանազանութեան՝ կրնայ բանասերն համառ-  
բեանք կարդալ:

ԱՅԻԱԳ ԽՕՍԵԼՈՅ

Նախ, պարտ է շատ ոչ խօսիլ. և զայլոց  
բան՝ իւր բանինն ի դերեւ ոչ հանել: —  
Էթէ որ պատմութիւն ինչ կամ ճառ առաջի  
արկեալ ասէ, և զիտակ է, զգիտութիւն իւր  
ոչ յայտնէ, մինչև նա հաստատէ զբան իւր:  
Եւ զբան՝ որ յայլմէ հարցանեն՝ պատասխանի  
ոչ առնէ:

Էթէ հարցումն ինչ ի մէջ բազմաց լինի՝  
յոր մերձ կայ, յառաջ քան զայլսն ոչ պա-  
տասխանէ: — Էթէ որ սկիզբն առնէ պա-  
տասխանել, և կարող է այլ աղէկ պատաս-  
խանի տալ, լոնսցէ, մինչ առաջինն կատար-  
անի, յետոյ ապա զպատասխանին տայ՝ այն-  
պիսի կերպիւ, որպէս զի զառաջնոյն բանն  
ոչ աղարարիցէ:

Էթէ երկուք ոմանք ընդ միմեանս դատ  
արկեալ են, ոչ հետեւի նոցին. և եթէ ՝ ձառ-  
կեն զբանն՝ ունկնդրութեամբ ոչ զողանայ.  
և մինչ ի յայն որ ի կցորդութիւն ոչ կոչեն՝  
ի մէջ ոչ անկանի:

Ընդ մեծամեծան մեծարանօք զրուցել, և  
զձայն ոչ բարձր ոչ խոնարհ՝ այլ չափաւոր  
ունել:

Էթէ նուրբատեսութիւն ունիցի բանն իւր՝  
ի մեկնութիւն բանինն յայտնի օրինակաւ յա-  
նայ խօսիլ, և այն՝ շարտովն<sup>(1)</sup>, և զառժման  
կարճախօսութեան պահեցէ: և բայ և բառ  
օտար՝ որ ոչ է ի գործ եկեալ՝ ի ներս ոչ  
մուծանէ: Եւ զբան ինչ որ ընդ ինք զրու-  
ցեն, մինչ ի յաւարտն ոչ սկսնու ի պատաս-  
խանին: Եւ զոր ինչ կամի սանել՝ մինչև ի  
միաքն ոչ խակայ՝ ի լեզու ոչ բերէ. և կըրկ-  
նարանութիւն ոչ առնէ, միթէ<sup>(2)</sup> հարկ լի-

նի. և թէ հարկի՝ լուսական բանն ոչ ասէ.  
և եթէ ցասնու բանիւք, զպարանոցին շար-  
ժիչն բաւական համարի, և զխառնուածն իւր  
ոչ այլայլէ: — Եւ ի յամենայն ժողով՝ ըստ  
պարտանի զբանն կարգէ. և ի մէջ խօսելոյն՝  
ձեռօք, ալօք և յօնօք ոչ առնէ. միթէ յար-  
մար ընդ բանն, նա չափաւոր առնէ, ըստ  
կիրպի բարձեւութեան: Եւ ընդ նյմարտն  
և ընդ օտան՝ որ լինի ի ժողովն, ոչ յանդըզ-  
նի հակասութեամբ, մանաւանդ հետ մեծա-  
մեծաց և չաղակրատողաց. և ընդ ումեք որ  
բանի տեղի ոչ ունի՝ ոչ ասէ: Եւ ի տրամա-  
բանութեանն եթէ միւսն քան զմիւսն առաւե-  
լու նյմարութեամբ, իբրևուն տալ պարտէ:

Եւ ի զրուցելոյ հետ ռամկաց և կանանց  
և յիմարաց և յարեցողաց, որքան հնար է  
զգուշացի: — Եւ բան բարակ՝ ընդ ումեք  
որ ոչ իմանայ՝ ոչ խօսի: Եւ ի խօսելն զլօզ<sup>(1)</sup>  
պատուոյն միշտ պահէ: Եւ շարժմանց և բա-  
նից և գործոց՝ ամենեւին բանիւ ոչ լինի. և  
աղիտութեամբ<sup>(2)</sup> ոչ խօսի:

Եւ յորժամ առաջի մեծամեծաց երթիցէ,  
զսկիզբն բանին այնպէս բարեք կարգէ՝ որ-  
պէս զի ի բարի հմայութիւն և ի գովեստ  
համարի: Եւ ի չարախօսութենէ և ի զուր  
տանելոյ և ի սուտ խօսելոյ՝ միշտ զգուշացի,  
որ քնա ոչ հետեւի. և ընդ այնպիսեացն՝  
որ զայս սովորութիւն ունին՝ ոչ յարակցի:

Եւ պարտ է զի լսելն առաւելու քան զիտ  
սեն. քանզի հարցաւ իմաստասէր օմն, եթէ  
ընդէր զսկզբութիւնք քան զխօսելոյ առաւել  
ունիս. պատասխանէ. Վասն զի լսելիք կրկին  
տուաւ, որ երկու հայնչափ լսեմ՝ զոր կու  
տանմ, և լեզու մի:

ԱՏԱԳ ԵԱՐԺՄԱՆ ԵՒ ՀԱՆԳՍՏԵԱՆ

Պարտ է ի ընթացսն ոչ թեթեւ երթալ  
և ոչ դուրսով. քանզի այն նշանակէ զթեւ  
թեւամտութիւնն, այս ինքն զսայրութիւնն<sup>(3)</sup>.  
և ի յամբ ընթանայն՝ ոչ առաւելու. զի այն  
նշանակէ գծուլութիւնն. այլ ի կերպ համեստի  
ընթացի. և որպէս կանայս և ներքինիս՝ զթեւ  
կուսն ոչ շարժէ: Եւ զերկուսն բազուկան

1. Այս բառի իբր մեկնութիւն զուրք զրուած է  
լր. որով տակէ մութ ձայ իմաստն:

2. Ափեցցիկ. անմտտա, անշարք: Առաքէ Սե-  
նեցի այլ զործածքի և այս բառս. իսկ ստուգել կնի՝  
Սմբատ Գուճապատայ՝ Օրինազարց մէջ նա և Ալէքնու-  
թիւն:

3. Առաջուց քայտորուած է այս բառս (թեթեւ-  
մտութիւն. բայց թուրք կամ արաբ տեղի բառէն է ծա-  
ղան թէ ուրիշէ:

1. Այսպէս զբարձ է ի կարգին, բայց այդ բարեց  
վրայ կեանք քրքր է յետոյ, նաև ինչիւր զանոց:  
Եարան ալ (չարթ) նշանակէ՝ պայման, կերպ:  
3. Միթէ. նշանակէ՝ բայց եթէ, բայց միայն երբ:

Հաւասար անձինն պահէ. և զգուշացի յերթեւեկ աննելոյ զձեռան: Չշտափառութիւնն յամենայն ներկայումս պահեսցէ: Եւ յորժամ ի յընթաց է, յորով անգամ յետ ոչ նայի, քանիք այն իսկ ինչ գործք կատարողաց: Դոյնպէս և զգուշին (կամ զպարանոցն) ի կոր ոչ պահեսցէ միշտ, քանզի այն նշանակէ զխորամանկութիւն և զտրամութիւն: Դոյնպէս և ի ծուռկան իխններով շտափառութեան հետեւի: — Եւ յորժամ նստի՝ զոտնն ոչ պարզէ, բայց ի յառանձին տեղովէ, թէ կամի. և զմիւս ոտքն ի վերայ միւսոյն ոչ դիցէ: Եւ ի վերայ ծնկաց ոչ նստի, միթէ ի ծառայութիւն իշխանաց, և զմարդպետին իւրոն և հօրն, և նոցա որք սոցինն աշտինաւ նակիցք են: Եւ զգուշս ի վերայ ծնկացն կամ ձեռացն ոչ դիցէ. քանզի նշան է տրբութեան և մեղկութեան: Եւ ընդ մուրուսն և ընդ այլ անգամսն ոչ խաղայ. և զմատն ի բերանն և յընդգունն ոչ սծէ. և ի յօրանելոյ և ի ճակատալոյ զգուշացի, և ի զկտալոյ և յայլ ձայնէ՝ որ ի փողացն և լանէ՝ զգուշացի: Եւ առաջի մարդկան ըզքիթն ոչ խնչէ, նոյնպէս և թուք՝ որչափ և կարէ՝ զգուշացի: Եւ թէ այսոց զոր ստացաք վերոյ Հարկ լինի և ոչ կարիցէ արգելու, այնպէս արացցէ՝ զի անպարկեւտ ձայն մի՛ լուիցի:

Կատարկ ձեռքք և թեզնօք և ստորտիք հանդերձին՝ զքիթինն ոչ մարբէ. և ի թքանելոյ բազում՝ որքան կարէ զգուշանայ:

Եւ յորժամ երթայցէ ի հրապարակ, ճանաչեսցես՝ զտեղիք. ոչ ի բարձրագոյն բարձին և ոչ ի ներքին, այլ յարժանն: Եւ եթէ զուրս ժողովոյ իցէ՝ ուր կամի անդ բազմի. զի ուք նա նստի՝ այն է ընտիր տեղին: Եթէ օտար ոմն է և յիւր սասիճանն ոչ է նստել, յորժամ իմանայ՝ փութով զտեղի իւր կայցի. և եթէ զտեղի իւր զատարկ ոչ տեսնու, լանայ նախ քան զծոնբանալ այլոց ի վայր իխնել:

Առաջի մարդկան քան զձեռք և զերես՝ այլ մասն մերկ ոչ ցուցանել: Առաջի մեծածնաց՝ զբազուկսն և զսրօնսն ոչ մերկացուցանել. և ի ծնկացն մինչեւ ի պորտն ոչ մերկացուցանել, ոչ յայտնի և ոչ ի ծածուկ:

Առաջի մարդկանն ոչ պտակել<sup>(1)</sup>. և յորսայս ոչ պտակել. միթէ է ի քունն ոչ գիտելով ըրի՛. զի այս պատճառէ զխորդայ... Եթէ այլքն ննջին՝ և ինքն ննջէ, և կամ արտաքս ելանէ. և այնպէս հնարի՛ որ մարդ յիրմէ տաղտկանայ ոչ...  
Եթէ յայս սովորութեանցս կարէ զինք ըզ-

գուշացուցանել, բարի է ընտրողութեամբ ի մանալ. եթէ արժէ այս զայն նախատինքն, և եթէ ոչ՝ ինք զգուշացի:

**ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ ՈՐ Է ԱՂԱՊ ՃԱՇ ՈՒՏԵՂՈՅ**

Նախ զձեռն և զբերանն և զքիթն սուրբ լուացցէ, յայնժամ մերձ սեղանոյն եկեսցէ. և յորժամ ի վերայ աթոռոյն նստիցի, ի ճաշ ուտելն խորութիւն<sup>(1)</sup> չառնէ, մանաւանդ յորժամ հիւր ունիցի: Չձեռս և զհանդերձս մի՛ թաթախեսցէ. քան զերեք մասն այլ աւելի ի գործ ոչ սծէ: Եւ զբերանն ընդարձակ ոչ բանայ. զպատառն մեծ ոչ առնու և ոչ փութով կլանէ. և ոչ ի բերանն շատ պահէ. և զմատնն ոչ լեզու: Եւ ի գանազան խորտիկսն՝ ցանկութեամբ զակնն ոչ արկանէ. և զպատրաստեալ կերակուրն՝ ոչ ընտրէ, որպէս թէ զմիւսն որ էսա՝ զնէ և այլ առնու:

Եւ եթէ զեղեցիկ կերակուրն սակաւ է, միայն յայնն ոչ յարձակի, այլ այլոցն թողացուցցէ: Եւ զճարպութիւն<sup>(2)</sup> կերակրոյն՝ ի վերայ մատանցն ոչ թողուցու: Չհաց և զաղ ոչ թանայ: Եւ ընդ հացկիցոսն բազում անգամ ոչ հայի. և զպատառն ոչ նկատէ, այլ իւր առաջի ուտէ: Եւ զոր ինչ ի բերանն տանի, որպէս ոսկոր, ի վերայ հացին և սուֆրայինն ոչ դիցէ. և թէ ի պատառն ոսկոր իցէ, ի բերանէն այնպէս հանէ՝ զի մի՛ զիտասցեն. և թէ այլ ոչ առնէ՝ զու պարտուկէ. և զկերակուրն որ առաջի քո է՝ այնպէս հաշտկեա՝ որպէս զի ի մնացորդսն այլք ճաշակելով ոչ տաղտկացցին: Եւ ի բերանոյն կամ ի պատառէն մասն ինչ ի պնակն մի՛ ձգեսցես, կամ ի վերայ հացի: — Եւ ի սեղանն՝ նախ քան զայլսն զձեռնսն մի՛ յետ կայցի: Եթէ յագեալ իցէ՝ մտղանք<sup>(3)</sup> առնէ, մինչեւ այլքն պարտապին. բայց թէ նոքա զձեռնսն արգելուն, անպատճառ և ինքն ի բաց կացցէ:

Եթէ ի տեղի մի է որ օտարք ոչ գոն, և թէ ի միջ կերակրոցն չրոյ կարօտանաս, ըզգուշացցի՛ զի մի՛ յըմբելն փողդ սնպատշաճ ձայն արձակէ: Եւ յորժամ զակոպաղ սրբել հարկաւորիս խելով, զերեսդ ի մի կողմն դարձոյ. և զոր լեզուտ կարէ սրբել ի կուտուր. և զոր խելով սրբես՝ ծածուկ արտաքս ձգէ, զի մի՛ այլք տեսեալ տաղտկաս:

1. Որկրամուրութիւն. անկուշ ուտել. Բժշկարան զբոց մէջ այլ յեղուի Խորի սուրի, անյաւաքաբ:  
2. Եղք, պարտաութիւնը:  
3. Չաւարանքանութիւն:

1 ի վերայն զբուռն և ընդգունել:

ցին. և եթէ զրոյց ինչ է՝ համբերէ ի սրբելոյ գակառայն: Եւ ի լուսացումն ձեռացն՝ զմատուանն և զծայր եղբնկացն և զաւանն<sup>(1)</sup> սըրբել ջանայ. նոյնպէս զեզեր շրթանցն և զըրբանն և զսկաւայն մաքրեացէ, այնպէս զի ձայն ոչ տացէ, և խախաչ ոչ առնէ, և ի կնիզն որ առաջի կայ՝ զտրնիկն ջուրն ոչ թափէ. և յարտաքս ձգելն՝ զձեռան պարտաւակ կայցի. և ի ձեռոս լուանայն՝ մի յառաջել քան զայլուն: Թէ յառաջ քան զճաշն ձեռք լուանայ պարտ է, նախ զհիւրսն մեծարեացէ քան զայլուն:

**ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ ԳԻՆԻԸՄՐՈՒԹԵԱՆ**

Յորժամ մերձ ի մելիսն երթայ՝ մերձ առ որդւոցն համասնուից իւր նստցի. և մերձ առ այն՝ որ ոչ միայն զանպատեհն խօսին այլ և կամին՝ զգուշացցի. և ախորժ բանիւք և չափաւոր տաղիւք և ստանաւորօք որ յարմար քնիք ներկայ ժամանակին՝ զարդարեացէ զմելիսն. և ի արտպաղտութենէն և ք տխրական բարուց՝ բնաւին ի բաց մերժեացի. Եւ ի ժողովիւրցն՝ եթէ որ ամօք կամ աստիճանօք պակաս իցէ, ի յունկնգրութիւնն յաւելուցու. և եթէ երգեցիկ որ իցէ, ոչ է պարտ երկար ճառս արկանել առաջի և պատմութիւնս: Եւ ամենեւին ի ներկայ ժամանակն պերեան պարտ է ի զլիսն որ մելիսին կայնուլ. այնպէս որ զայլուն մի արձանարհեացէ. և բնաւ ոչ յեմեացէ այնչափ՝ որ արբնայ և զսեւան կորուսանէ. զի յամենայն աշխարհս քան զանմիտ արքեայն՝ ոչ զոյ վլանաս. որպէս քան զգաստութիւնն և զմիաստութիւնն՝ ոչ զոյ զարութիւն:

Քայց թէ տկարագինի որ իցէ՝ սակաւ ըմբից կամ խառնեալ, կամ ի մելիսն խոյս տացէ: Եւ թէ նախ քան զայս՝ հարիֆնին<sup>(2)</sup> արբեալ լինին, ջանա փութով արտաքս եւլանել. և ջանայ որ ինք արբեալ արտաքս ոչ ելանէ: Եւ արբեցողաց բանիցն ունկնգիր ոչ լինի. և միջնորդ արբեցողացն ոչ լինի. միթէ կռի լինի՝ յայնժամ պարտ է ի միմեանց ուրոշել: Եւ եթէ կարող է ի զինքնպաւութիւնն, քան զայն որ ի կարգն կու գայ՝ այլ աւելի ոչ խնդրէ և ծանրանայ ընկերացն: Եւ եթէ որ յունկերացն ի զինի յմմբելն<sup>(3)</sup> բռնութեամբ այլ ոչ տացեն. և յորժամ սիրտն զըզուայ և որժկուայ ի մէջ մելիսն, այնպէս հնարի որ մարդ չիմանայ. և թէ ոչ

ժուժէ՝ իսկոյն արտաքս ելանէ. և թէ վերաբերութիւն լինի, այլ ոչ դառնայ ի մելիսն: Միտք և հոտոտելիք որ ի մէջ եղարցն է՝ ոչ ի վեր առնու. և կերակուր անզով<sup>(1)</sup> սակաւ ուտէ: Եւ զոր ինչ յատկութիւն որ ունի մարդն՝ ի յայն զովէ. և հետ ամենեցուն ոչ կայնու այնպէս համարականութիւն՝ որպէս հետ ընկերին: Եւ ի մելիսն՝ բաղում անզամ ի վեր ոչ ելանէ: Եւ եթէ որ զհիղեցկատիպ իցէ անդ, ոչ ձայի միշտ ի նա, թէպէտ համարականութիւն ունիցի. և ոչ խօսի ընդ նմա շատ: Եւ յառաջ քան զանմիտ արբեցութիւնն, որպէս սասացաք, արտաքս ելանէ յիւր առաջին բնակութիւնն. և թէ ոչ ժամանէ՝ ի տեղի մի երթայ՝ որ ի մելիսն հեռի լինի, և անդ ննջէ: Եւ որպիպ կարէ՝ ի մեծամեծաց մելիսն՝ ընդ նոսա որ հաւասարութիւն չունի և վրատակութիւն ոչ է պատահել, ընդ նոսա ոչ հաւասարի. և թէ ի հարկէ պատահէ որ արգելուն, պատճառ դնէ և արտաքս ելանէ. ու ամենեւին ի դմեալ և ի շարաբարոյ առանց՝ ի բաց կացցէ: Եւ եթէ զտեղ զի բռնութեամբ կամին հարբեցուցանել, նա զգուստանական բանիւ կամ այլազգ հրէլթով<sup>(2)</sup> արտաքս ելանէ:

Այս էր զոր խոստացեալ էաք վասն պարկեշտութեանց, որչափ այս տեսակս ի սահմանի է և ի թուոց հեռի լինի. և վասն դըրութեանց և ժամանակաց՝ փոփոխի. բայց ի վերայ իմաստնոյն զորաւորի՝ որ զվանտն և զարմատս զործոց բարութեանց պահեալ լիցի, սգաստութեամբ զպահելն սահմանաց և նրբութեանց ամենայն բանից ի տեղի իւր և ի ժամանակ իւր, դժուարագոյն ոչ լիցի. և ի բոլորացն հանել զմանաւորսն՝ նմա դիւրագոյն լիցի: Եւ ստոյգ խելքն արդար զաւտաւոր է յամենայն գրունս բանից: Եւ Աւստուած զիտէ զճշմարիտն:

**ՔԱՆԱԲԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԹՏՂՐՈՒՄՆ ԶԱՆԱԿԱՑ**

Յորժամ զաւակ ի պիւտ գայ, սկսանել պարտ է յանուանակոչութիւն նորա՝ յանուն բարի. զի թէ անյար անուն եղեալ նորա՝ ժամանակ մի կենաց իւրոց տրտում կենայ: Յետոյ զայնիկ ընտրել պարտ է, որ յիմար և ախտաւոր չլինի. զի սովորութիւն վատ և առաւել ախտ՝ կաթաւոր զայնեկին փոխադարձի ի տղայն: Յորժամ կատարեացի առաջին հասակն, — ի կրթումն բարուց իւրոց և ի խրատ պարտ է սկսուել, յառաջ քան զայն որ

1- Այսպէս զրուած է, թուի՝ բուր, սիւր.  
 2- Բարեկամքն, անցնելիքն:  
 3- Այս տեղ առաջ զբեր է Բոմբոպոյի, յետոյ աւրիք է, որով իմպուս անկատար թայս:

1- Կարծեմ՝ թեթեւ և անոյշ ուսուիլիք:  
 2- Հնարք. հարատրութիւն:

բարբ իւր ի յապականութիւն սկսանի, զի մանկական տին ընդունակ է, և զբարս խոտանս առաւել ընդունի վասն պակասութեանն, և կարեաց՝ որ ի բնութիւնն իւր կայ. և որ զօրութիւն որ նախ երեւի ի մանուկն՝ յայն լանայ որ հաստատան: Առաջին իրքն ի նշանաց զօրութիւնէն ընտրողութենէ որ ի տղայն յայտնի՝ ամօթն է. նշան, յորժամ տիրէ ամօթն՝ նա զլիակոր կու կենայ տղայն ժամանակ մի. և այս զուշակումն է հոգւոյն իւրոյ, որ զբարին ընտրէ և զչարն անտարգէ. և յորժամ այսպէս լինի՝ յաւելուն ի խրատ, որ այլ առաւել ի նոյն կենայ:

Ծուրութեան ամենեւին տեղի ոչ տայ: — Ամենայն իրք ի կրթութեան մասնական այս է. որ ի յարակցութիւն նոցա որոց զործն ի յապականութիւն կու հայի, զզոյշանալ, ի խաղ և յի և նիստ: Չի հոգի մասնական տակաւին անգիծ է, և ընդունակ է կերպի՝ առաւել քան զհամակասական իւր. պարտ է զնա ի տեսակ մարգարէութեանցն<sup>(1)</sup> սգաստացուցանել, մանաւանդ ի քարամաթ<sup>(2)</sup>:

որ ի խելս և ի յընտրողութիւնս և ի հաւատարմութիւնս և ի պարկեշտութիւնս՝ արժանաւոր են, և ոչ յայն որ ի գանձս կամ յազրս վերաբերի:

Ենտոյ զճանապարհօ և զշաւիղս հաւատոյ նմայ ուսուցանեն, և զնա ի պակասութիւն նմին յօժարեցնեն: Եւ յորժամ ի հաւատոցն երես դարձընէ, յանդիմաննն զնա. զբարին առաջել իւր զովել և զվատթարսն պարսաւել: Եւ եթէ զործ բարի ինչ ի նմանէ յայտնի՝ զայն զովել. և եթէ տակաւ ինչ անկարգութիւն յայտնէ, յանդիմանութեամբ և ըստ պատճառեօք ուղղել. և զանպարկեշտ ուտել և ըմբել, և զհանդերձս փափուկօ և զարգարունս, յայտ նմին արհամարհ ցուցանել. և բառնալ ամենեւին զհոգին ի մարմնաւոր փափուկութեանց: Եւ ասել նմա, թէ բազմութեանս հանդերձ և նկարէն զործած՝ կանանց է վայելուչ և ոչ արածց, զի մեծադարմն՝ ի հանդերձն ոչ հայի: Եւ յորժամ յայն վաբժի, և լսելիք նորա այնու լցուի՝ վասն կրկնեւոր բազում անգամ բանիցն, յայնժամ նմա սովորութիւն դառնայ. և սովորութիւնն երկրորդ բնութիւն է, ըստ իմաստոյն: Եւ նոքա որ հակառակին այսմ խրատու՝ ի նոցանէ պատրաստ պահել զաղայան:

1. Խրտոց, առածք, վարդապետութիւնք իմաստաբերաց:  
2. Բարեբարութիւն, ազնուարարութիւն:



## ԻՇԽԱՆԱՑ ԿՂԶԻԲ

(Տես էլ 228)



ՈՏԻ զամբարած ժողովն Սրբոց Առաքելոց եկեղեցւոյն մէջ <sup>(1)</sup> բարեցաւ, ներկայութեամբ կայսեր և քահանայապետական նուիրակաց, որք այնպիսի անօրէն հնարիւք վաստակուեր էին: Ետողւոյն անդամք երեք հարիւր տասնութը եպիսկոպոսունք էին. ինքնատիոս ա-

սոնց զիմացն ելաւ իբր մեծ յանցաւոր մը: Եկեղեցւոյ ամենամեծ զայթակղութիւններէն մէկն է այս, և յանցաւոր համարելոյն դատատանը երկայն փաղարածութիւն մը եղաւ: Բարդաս զրեթէ սրոյ հարուածով մը սպաննեց Անկիւրիոյ մետրապոլիտան, որ համարձակեր էր չհանիլ ցուցընել կայսեր նախածական կերպով վարուելուն ամբաստանելոյն հետ: Եթովպիացիներու սուտ վկայք հաստատուցին, թէ երբէք ինքնատիոս օրինաւոր կերպով

(1) Այս եկեղեցւոյս տեղը շինուած է Սուլդան Մէմետի մզկիթն: